



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐՔԵՐՈՂԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերոյ  
համայնք, ՀՀ, Արարատի մարզ, հ. Նոր Խարբերոյ, Հեռ. (0236)6-00-30,  
norkharberd.ararat@mta.gov.am

11 հունվար 2017թ.

### ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017 թվականի հունվարի 11-ին Նոր Խարբերոյ համայնքում տեղի ունեցավ հանրային լսում:

Նախագահում էր համայնքի ղեկավար Կ. Կակոյանը, քարտուղարում էր աշխատակազմի քարտուղարի Ժ/Պ Կ. Արզումանյանը:

Մասնակցում էին Արարատի մարզպետարանի ներկայացուցիչ Ա. Ասատրյանը, ավագանու անդամներ, համայնքապետարանի աշխատակազմը, մշակույթի տան, գրադարանի, երաժշտական և հանրակրթական դպրոցի տնօրեններն ու աշխատակիցները, համայնքի բնակիչները:

ԼՍԵՑԻՆ- Արարատի մարզի Նոր Խարբերոյ համայնքի ղեկավար Կ. Կակոյանի հաշվետվությունը 2016 թվականի երկրորդ կիսամյակում կատարած աշխատանքների վերաբերյալ:

2016 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում Նոր Խարբերոյ համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

Համայնքապետարանը բնակիչներից ստացել է 363 դիմում, համայնքի ղեկավարի և ավագանու անդամների կողմից ընդունելությունների ընթացքում բարձրացված խնդիրները քննարկվել են աշխատակազմի և ավագանու նիստերի ժամանակ, տրվել են համապատասխան լուծումներ:

Համայնքապետարանը բնակիչներին տրամադրել է շուրջ 980 տեղեկանք, ստացել 176 պաշտոնական գրություն մարզպետարանից և տարբեր կազմակերպություններից, դրանք քննարկվել են սահմանված ժամկետներում, տրվել պատասխաններ:

2016 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում համայնքի վարչական տարածքում պարբերաբար իրականացվել են սանմաքրման աշխատանքներ, մաքրվել են ոռոգման առուները, փողոցները: Շաբաթը երկու անգամ կատարվում է աղբահանություն:

Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասի չափագրման, սահմանների ճշգրտման և հողատեսքերի փոփոխման և ձևակերպման աշխատանքներ:

Համայնքի ղեկավարի աջակցությամբ վերադասից ստացվել և համայնքի բնակիչներին է բաժանվել պարարտանյութեր:

2016 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում համայնքի բյուջեի սեփական եկամուտները հետևյալ հարկատեսակների կազմել են՝

- հողի հարկ՝ 1838.738 հազար դրամ.
- գույքահարկ՝ 10907.145 հազար դրամ.
- տեղական տուրք՝ 664.0 հազար դրամ.
- ոչ հարկային եկամուտներ՝ 3338.353 հազար դրամ:

Համայնքում իրականացվել են մի շարք միջոցառումներ.

Հանդիսավորությամբ նշվել են Գիտությանը, Անկախությանը, Ոսոցջին և Ամանորին նվիրված օրերը:

Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրվել է 5795.000 հազար դրամ ֆինանսական աջակցություն:

Հուլարկավորության նպաստ՝ 1800.0 հազար դրամ:

Համայնքում նախադպրոցական դաստիարակությունը պատշաճ կազմակերպելու համար հատկացվել է 16577.0 հազար դրամ:

Երաժշտական դպրոցին 9266.5 հազար դրամ:

Աղբահանության աշխատանքների կազմակերպման համար հատկացվել է 2580.0 հազար դրամ:

Համայնքի հիմնախնդիրներից է գյուղամիջյան ճանապարհների բարեկարգումը, խմելու և ոռոգման ջրի ներքին ցանցերի վերանորոգումը, նոր թաղամասերում էլեկտրական ենթակառուցվածքների տեղադրումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱԿՈՅԱՆ ԿԱԿՈՅԱՆ



Կար. Աշխատակազմի ջարտողարի Ժ/Պ՝ Կ. Արզումանյան